


ՅԵՎՀԵՑ ԶԱՐԵՆՑ

ԱՌԻՔԱՅԱԹ

MCMXXVII



(14)

Улья Курбеке
36. 9 курбек

1927- VU - 2



896.99

2-28

Ա.

ՅԵՂԻՆԵ ԶՈՐԵԱՑ

ՌՈՒԲԱՎԱՐ

1008
36954

ԴՐԱՄԱԿԱՆ



(ԽՀ-ՀՀՀՀ)

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Թ. Ի Ֆ Լ Ի Ս

1927

2784

1756A



2004

18233 234-2014
Shane

(1535-54) 31-

Գլուխագլած № 1139 Տիրաժ 1000
Թղթիկս, Ժ.Տ.Հ. Պոլիգր.-Տրեստի 4-րդ տպ. Պուշկ. փող. № 3

ԱՆԻԲԱՅԱԹ

Ա.

Ապրում ես, շնչում ես, դու դեռ կաս—
բայց ամեն վայրկյան դու միլ ես。
Անցյալ և դառնում քո ներկան—
ու ամեն վայրկյան դու միլ ես.
Բայց ներկան քո—հնանո և գալիքի՝
մեռնելով—նա սնում և գալիքը,
Յեզ այսպես—տեսմ ես դու յերկար,—
ու ամեն վայրկյան դու միլ ես:

Բ.

Յու ամեն ակնթարթը մի սերմ է,
Վոր կրում ե իր մեջ իր մահը.
Բայց հոգին քո—խնդռն ու անահ ե
Յեվ միշտ խնդավառ ե ու ջերմ ե:

Գ.

Նա թե կյանք ե, թե մահ—ակնթարթը.
Անհատնում հատնում ե, վառք ե.—
Յեվ այսպես՝ մշտառե ե աշխարքը.
Անդադար թարթում ե—ու անթարթ ե:

¶.

Նա հոսում ե, ալիք առ ալիք,
Յեզ ամեն վայրկյան—այն չե.
Յեզ ամեն մի վայրկյանը—հնչեղ
Ներկա յե, անցյալ—ու դալիք:

ՅԵ.

Յես քեզ վժնց, քեզ վժնց հասկանամ,
Յես քեզ վժնց ամփոփեմ ուղեղում իմ,
Յերբ չեկած՝ դու արդեն իսկ չկաս,
Բայց հար դու լինում ես—ու տեսում ես:

9.

Անցնում ե, հոսում ե, վարար ե,
 Յելնում ե, սուզվում անդադար.
 Մշտապես մեռնում ե—ու հար ե,
 Մշտապես ու հոր—անկատար:

6.

Ո, խմիլ, խմիլ գու աղահ,
 Ո, խմիլ անգաղար այս հատնումը.
 Կորածը—իրեն նա գտնում ե,
 Յեվ իր այդ գտնումով—չկա:

Ը.

Այս զետը—նայիր—նա հոսում է,
Քեզ թվում ե թեկուղ անփոփոխ:
Իսկ քո փառքը, հիմար, յերազում ե—
Հավերժական կոթող:

Թ.

Եյ, դնւ, իմաստուն վարպետ,
Վոր տաշում ես, տաշում այդ քարերը.
Քո ամեն մի, ամեն մի զարկին
Իր նիշը արգեն նա դրել ե:

Ժ.

Նա կը ին ասում է. — «Գարունը
Ծաղկելու յե եգուց վարդերով իր»:
Առաջն վնր արևն և հուրիստում այդ
Յեզ մվ և այդ նոր արտեվորը...

234-2014
(1008) (1535-54)
(36954)

ԺԱ.

Վերցնում ես քարը — մտածում ես.
«Հետքեր ե կրում նա ջրի» —
Բայց չե՞ վոր այդ նույն վայրկանին հենց
իր վրա դու քո ձեռքը դրիր:



ԺԲ.

Մի անցորդ անցավ քաղաքից այս
Ու գնաց. ու չեկավ նա յետ:
Յեվ քաղաքը—կըկի՞ն զեղեցիկ ե,
Նայում եմ նրան—թեև յետ:

ԺԳ.

Դու ամեն վայրկյան քեզ ժխտում ես
Ու այդպես ժխտելով՝ հաստատում.
Պարտըվում ես գու քեզ ու հաղթում ես,
Սաւայն միշտ՝ այդ դռւ յես—ու դռւ:

ՃՅԵ.

ՃՊ.

Անտառը թափում ե իր սաղարթը,
Անտառում հատնում ե ու վատնում.
Բայց նայիր—ինչքան նա զվարթ ե;
Ինչքան նոր ե—ու միշտ անհատնում:

Դու վոսկի զրիչ ունես,
գու այնպիս խմասանն ես.
Ինքդ քեզ հրաժեշտ ես տում,
ինքդ քեզ կրկին ընդունում ես.
Գիտես, վոր՝ լինելով ե լինում,
հատնելով ե անհատնում այս տունը—
Յեվ միշտ ծիծաղկուն ե հոգիդ
ու սիրող՝ մշտաղիս ինդնան ե:

Ժ 2.

Թե կտոր աեսնես մի ամպի—
ասա՞ սա ուրիշ է արդեն,
Թե նստես, թե իջնես թամբից—
ասա՞ սա ուրիշ է արդեն,
Վերադարձը դարձ չե այլս
և վնչ ել կրկնություն հնի,
Քո անցած ամեն մի ճամփին
ասա՞ սա ուրիշ է արդեն:

Ժ Ե.

Նա գնաց—ու կրկին յեկավ՝
յերեկվա իմ սիրած սիրեկանը,
Բայց աեսա, վոր արդեն չկա—
յերեկվա իմ սիրած սիրեկանը:
Կանգնած է մի յերբռդղը դեմո.—
այդ նա չե այլս, նա չե.—
Յեկած է—ու կարծես չեկած՝
յերեկվա իմ սիրած սիրեկանը:

ԺԷ.

Յերկնքից թուշում ե մի թուչուն.—
Քո ներկան ե այն, բարեկամս.
Ինքն իրեն ժխտող մի հնչյուն—
Քո ներկան ե այն, բարեկամս.
Նա դնաց—ու կըկին դարձավ.—
այդ նմ յե արդյոք, թե ուրիշը.
Դու նրան ել չես ճանաշում...
Քո ներկան ե այն, բարեկամս:

ԺԹ.

Դու մի որ աչքերդ կփակես,
վոր ուրիշը քո տեղ գոյանա.
Կդնաս, կանցնես աշխարքից,
վոր ուրիշը քո տեղ գոյանա.
—Այն դռւ յես, իմաստուն, այն դռւ,—
Բայց արդեն դարձած մի ուրիշ.
Հաստատեց, ժխտելով, նա քեզ;
վոր ուրիշը քո տեղ գոյանա:

ի.

Ինչ թուշնդե քո գինին, իմաստուն,
նըանից իմ հոգին հարբում ե.
Նո գինի յե, թե լսուք ե ազդու.
նըանից իմ հոգին հարբում ե.
Խմելու յես, մահով իմ սեղած,
խմելու յես դու յել այս գինին,
Յեթե այս պարաեզը դաս դու.—
նըանից իմ հոգին հարբում ե:

ի՛մ.

Դու քսում ես հոնքերիդ սուրմա—
դու անհոգ ես.
Ինչու յե արտնջում զուը նա—
դու անհոգ ես.
Յես գիտեմ թե արտունջը նրա,
թե քո այդ պայծառ խնդությունը.
Տնւը դու ինձ մանկություն, տուը մահ,—
դու անհոգ ես:

ԱՊ.

Դու ինքդ քո մեջ միասիրտ.—
ինչ վոր կառ նա կտ ու այդպէս ե.
Դու արվում ես մեղ միշտ միասին.—
ինչ վոր կառ նա կտ ու այդպէս ե.
Բացվում ես, լինում, գոյանում—
հառնելով հենց ինքդ քո դեմ
Պատմում ես զու միշտ քո մասին.—
ինչ վոր կառ նա կտ ու այդպէս ե:

ԻՊ.

Ալ, նայեք, այդ մարդը, այդ հիմարը.—
նա տեսնում ե լոկ այն, ինչ տեսնում ե.
Հավատում ե նա, վոր սա քար ե.
նա տեսնում ե լոկ այն, ինչ տեսնում ե.
Դու ծաղրիր նրան, իմաստուն.
դու տեսնում ես աճումն ու ընթացքը
Յեվ դիտես, վոր ընթացք ե աշխարհը,—
նա տեսնում ե լոկ այն, ինչ տեսնում ե:

ԻՅԵ.

Այդ կապիկը՝ ձեռքին հայելի—
նա կարծում ե՞ արդեն իմաստուն ե.
Ժպտում ե հայելուն նայելիս—
նա կարծում ե՞ արդեն իմաստուն ե.
Ախ, նայեք՝ ինչպէս ե սեղմել
նա փայլուն պակու այդ կտորը.
Իր միբաժն ե տեսել նա ելի—
և կարծում ե՞ արդեն իմաստուն ե:

ԻԶ.

Այդ դերվիշը—տեսեք՝ նա նստած
ուզում ե ըմբռնի ու հասնի.
Իր մաքի թեվերին վստահ՝
ուզում ե ըմբռնի ու հասնի.
Նա կարծում ե, վոր փոխվում ե ամբողջը,
և իր միտքն ե միայն, վոր կայուն ե—
Յեկ այդպես՝ անշարժ ու հաստատ՝
նա ուզում ե ըմբռնի ու հասնի...

ԻԵ.

Դու ասիր՝ նայել, հասկանալ,
ու սուզվել, ու դառնալ անե.—
Նա ասաց՝ լինել, կատարել,
ներծծել հուբեր ու շողեր:
Դու ասիր՝ ամփոփել ամբողջը,
հաշտըվել ու խաղաղ լինել.—
Նա ասաց՝ ամբողջին տիրանալ,
փորպեսզի ամբողջը—փոխել:

ԻԸ.

Դու ասիր՝ անե՛ յե ամբողջը,
աչքերիդ իջած մի շղթա ե.
Դու գերի՛ յես, մարդ, ուղեղիդ,
ուղեղիդ անե վանդակին:—
Նա անդուլ պնդում համարեց
թե ուղեղը այդ, թե շղթաը—
Յեվ յելավ, վոր փոխի այդ շղթաը—
և մահին խնդաց խնդացին:

ԻՐ.

Նա կուզեր, վոր լինի անե,
Վոր թվա լոկ, լոկ լինի հարց.
Բայց կանգնած ե նա, ահա տես —
Մշտածուփ, մշտափոխ ու կարծը:

Թե արել այլում ու կիզում ե —
Նա ասում ե՝ ուր ե իմ կամքը.

Ամեն ինչ անհաստատ ու հոսուն ե.
Նա ասում ե՝ ուր ե իմ կամքը.

Ո, դիտես դու աշխարհի լեզուն
և դիտես, վոր կամքդ՝ այդ լեզուն ե —
իոկ հիմարը դեռ ափսոսում ե.
Նա ասում ե՝ ուր ե իմ կամքը:

Ա.Ա.

Ասում են՝ վիթխարի հերսո,
հանճարեղ եւ յեղել իսքյանդարը.
Շարժել ե, խառնել ե իրար
ազգեր ու ցեղեր իսքյանդարը.
Բայց գիտես գու շարժումն ու ընթացքը
և գիտես՝ չիներ թե ընթացքը.
Աշխարհում և մի շուրջ անգամ
գժվար թե ցեղեր իսքյանդարը:

ԼԲ.

Հետեանք ես զու, խմասանմ,
այս մեկը զու լավ իմացիր.
Բայց զնւ ել ես, զնւ ել ես ազգում,
այս մեկը զու լավ իմացիր.
Դու ուզում ես, վոր ազմա լինես. —
ուրեմն հասկացիր ճանապարհ
Յեվ փոխիր, վոր հաստատ գաս առնմ,
այս մեկը զու լավ իմացիր:

ԼՊ.

Մի հարուստ ե անյնում փողոցով—

ախ, նայեք՝ նա լինչքան ինքնադոհ ե.

Մի ժպիտ կա դնմքին խոցող—

ախ, նայեք՝ նա լինչքան ինքնադոհ ե.

Նա կարծող ե հասկանալ, այդ հիմարը,

փոր շուրջը ուռճանում ե իր մահը

Յեկ տեսնել այդ ձեռքը սղոցող—

ախ, նայեք՝ նա լինչքան ինքնադոհ ե:

ԼՊ.

Մտել են տոնական դռներից—

և գրախտ են կարծել այս տունը.

Սահմանված ձեռքով մի վերին՝

անխախտ են կարծել այս տունը:—

Յետեի դռներից մենք մտանք՝

քանդելով սյուներն ու հիմերը—

Յեկ դիտենք՝ ձեռքերով ձեր շինված

մի զնդան ե անձի այս տունը:

ԼՅԵ.

Քեզ տրված ե կյանքը, վոր լինես—
ու վոչինչ յերադ չթվա,
Վոր կյանքում քո կյանքը շինես—
ու վոչինչ յերադ չթվա,
Քեզ դերում ե ընթացքը այս տաք,
բայց տեսնեմ ես գու այն, վոր դալիս ե,
դալիս ե իր դալիքը հինե—
ու վոչինչ յերադ չթվա:

ԼԶ.

Աշխատիր, առկա անդադար, ստեղծիր անդուլ—
դա կամուրջ ե.
Դրանով ես շնուռմ դու աշխարքը, դրանով քանդում—
դա կամուրջ ե.
Դրանով սերմանում ես կյանքեր,
մեռնելով հառնում դրանում.
Հուրհուրա խանդնի, խմասուն, ու խնդա խնդուն—
դա կամուրջ ե:

ԼԵ.

Բնթացիր դու, մարդ, անդադար,
 վոր վոչինչ քեզ յերազ չթվա,
Վոր լինես անվախճան ու հար—
 ու վոչինչ քեզ յերազ չթվա,
Վոր զգաս, շոշափես դու կյանքը՝
 մշտահնոսը դու այդպիսով
Յեկ դառնա աշխարհը՝ աշխարհ—
 ու վոչինչ քեզ յերազ չթվա:

ԼԸ.

Ծովափին նստած ե մի մարդ.—
 այդ գմւ յես գուցե, իմաստն.
Նայում ե ծովին նա հանդարտ—
 այդ գմւ յես գուցե, իմաստն.
Նա դվարթ ժպտում ե ծովին,
 նա սիրում ե հոսուն այդ անհունը—
Բայց ահա հեռանում ե անդարձ,—
 այդ գմւ յես գուցե, իմաստն:

ԼՇ


Նա ուզում ե գտնել մի կշիռ—
ու չափել նրանով ամբողջը,
Աւսենալ անխախտ մի հաշիվ—
ու չափել նրանով ամբողջը.
Նա սիրում ե «հավերժը» միայն,
ախ, նայեք՝ նա վնարում ե «կայունը»—
Յեվ դտնում ե մի... դինու շիշ—
ու չափում նրանով ամբողջը:

Խ.

Նա կուզեր, վոր վողջը նրան
միանգամ ընդմիշտ տրվի,
Վոր կյանքի իմաստը հուրհուրան
միանգամ ընդմիշտ տրվի.
Դու գիտես, վոր ընթացք ե աշխարհը,
գոյանում ե ու լինում անվերջ—
Յեվ գուցե քեզ մահը միայն
միանգամ ընդմիշտ տրվի:



մայթ պերի որի ուժութ ու
պարսկական նորման ուժութ
մայթութ ուշտահան պարսկան ուժութ ուժ
պարսկական նորման ուժութ
հայտնական ուշտահան ուժութ ուժ
հայտնական ուշտահան ուժութ ուժ





418

0014702

2013

«Ազգային գրադարան»



NL0014702

